ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՁԸ

Մասիս համայնքի 2025թ. բյուջեն մշակվել է՝ հիմք ընդունելով Մասիս համայնքի 2022-2026թթ հնգամյա զարգացման և 2025-2027թթ միջնաժամկետ ծախսերի ծրագրերով նախատեսված գերակայություններն ու առկա միջոցները, միաժամանակ կարևորելով համայնքի համաչափ զարգացումը:

Համայնքի գործունեության արդյունավետությունը մեծապես կախված է բյուջետային գործընթացի ճիշտ կազմակերպումից, բյուջեի եկամուտների արդյունավետ հավաքագրումից և միջոցների նպատակային ու խնայողական օգտագործումից:

Մասիս համայնքի 2025 թվականի համար նախանշված ծրագրերի իրականացումը հիմնված է համաչափ զարգացման սկզբունքի վրա, որի նպատակային իրագործման համար առաջնահերթ և գերակա են համարվելու՝

- Կառավարման արդյունավետության բարձրացումը, համայնքապետարանի գործունեության թափանցիկությունը և բնակչությանը լիարժեք հաշվետվողականությունը
- Համայնքի մասնակցային կառավարման մշակույթի ձևավորումը՝ բնակչությանը մասնակից դարձնելով հանրային նշանակություն ունեցող և բնակչությանը հուզող որոշումների կայացմանը՝ հարցումների, քննարկումների և տեղական հանրաքվեների միջոցով:
- Իրավահավասար ու ներդաշնակ համակեցության մշակույթի հանրահռչակումն ու ձևավորումը:
- Համայնքի ֆինանսական վիճակի բարելավումը՝ բարձրացնելով սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը և բյուջետային միջոցների նպատակային օգտագործումը
- Բնակչությանը և տնտեսվարող սուբյեկտներին մատուցվող համայնքային ծառայությունների և այլ լրացուցիչ ծառայությունների որակի բարձրացումը
- Կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների համայնքային ենթակառուցվածքների պահպանման, շահագործման, նորոգման, ջեռուցման համակարգերի վերականգնման, գույքային վերազինման և այլ աշխատանքների իրականացումը
- Համայնքի բնակարանային-կոմունալ տնտեսության, բարեկարգման և ճանապարհային տնտեսության բնագավառներում կապիտալ ներդրումների իրականացումը
- Համայնքի մշակութային, մարզական և հասարակական կյանքի աշխուժացումը, նոր ենթակառուցվածքների կառուցումը՝ հաշվի առնելով համայնքի համառոտ նկարագիրը և զարգացման ուղղվածությունն ու տեսլականը
- Համայնքի բնակչության խոցելի խմբերին աջակցության ցուցաբերումը
- Համայնքի կազմում ընդգրկված բոլոր բնակավայրերի բնակիչներին համայնքային ծառայություններից օգտվելու հնարավորությունների ստեղծումը

Համայնքի 2025թ. զարգացման հիմնական ուղղությունները միտված են բնակչության կենսական մակարդակի բարելավմանը, շրջակա միջավայրի պահպանմանը, համայնքի հարմարավետ ու բարեկեցիկ միջավայրի ստեղծմանը, համայնքային ենթակառուցվածքների արդիականացմանն ու զարգացմանը, ինչպես նաև համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան քաղաքաշինական ծրագրերի իրականացմանը:

Դիմելով համայնքի բնակիչներին, ավագանուն, աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների աշխատակիցներին, խնդրում և հորդորում եմ սրտացավ մոտեցում ցուցաբերել համայնքի 2025թ. բյուջեի միջոցների գոյացման, դրանց նպատակային և հասցեական օգտագործման, բյուջեի կատարման և վերահսկման ուղղություններով:

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ